

## **Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

### **ՌՈՒԶԱՆ ԼԵՎՈՆԻ ՄՈՒՍԵՅԱՆ**

## **ՀԱԳՈՒՍՏԸ ՈՐՊԵՍ ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀԱՅ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱՄՇՈՒՅՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

Ժ. 02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝** ք.գ.դ., պրոֆեսոր Գայանե Վիուլի Եղիազարյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

ք.գ.դ., պրոֆեսոր	Գայանե	Ռազմիկի
Հովհաննիսյան		
ք.գ.թ., դոցենտ	Քրիստինե	Մուրադի
Հարությունյան		

**Առաջատար կազմակերպություն՝** Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում գործող 059 «Սլավոնական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Թումանյան 42):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԲՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. հոկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
ք.գ.թ., դոցենտ՝



Դավիթ Օնիկի Ղարիբյան

XX դարի երկրորդ վերջին և XXI դարի սկզբին գիտական միտքն առավել կարևորում է միջգիտակարգային ուսումնասիրությունները՝ խարսխված տարբեր գիտակարգերի փոխկապակցվածության վրա: Լեզվաբանությունն այսօր ուսումնասիրվում է ոչ միայն ավանդաբար ընդունված մեթոդներով և որպես առանձին գիտակարգ, այլ ներկայանում է գիտական ուսումնասիրությունների նոր հարացույցով, որտեղ միաձուլվում են տարբեր գիտակարգերի բազմավեկտոր վերլուծական մեթոդներն ու գործիքակազմը: Լեզուն այսօր դժվար է պատկերացնել առանց ճանաչողական-հասկացական գործընթացների և մշակութային արժեքների հետ համադրության:

Լեզվաբանական ուսումնասիրություններում ներկայումս կարևորվում են մշակույթ-ինքնություն-նշան-լեզու աղերսները, երբ աշխարհի պատկերի տարբեր մոդելների նշանային համակարգերը և լեզվական համակարգը փոխալսմանավորում են միմյանց: Նշանային համակարգերը, որոնք կիրառվում են հաղորդակցման համար, որոշում են մարդու մտածական և հասարակական գործունեության ներուժը, և, անհերքելի է, որ լեզուն առանցքային դեր ունի մարդու կողմից աշխարհի կաղապարման գործընթացներում, ուստի լեզվաբանությունը և ճանաչողական գիտությունը նշանագիտության անկյունաքարերն են: Նշանագիտության, ճանաչողական գիտության և լեզվաբանության ընձեռած լայն գործիքակազմի կիրառմամբ է առանձնանում ճանաչողական նշանագիտությունը՝ որպես նոր միջգիտակարգ, որի նպատակն է ուսումնասիրել բառիմաստը՝ համախմբելով վերոնշյալ բոլոր գիտական ուղղությունների տեսամեթոդական և հասկացական դրույթները:

Սույն ատենախոսության **առարկան** հագուստն է՝ որպես նշանային համակարգի տարր հայ և բրիտանական լեզվամշակույթներում: Որպես հետազոտության **տեսական-մեթոդական հիմք** ընդունել ենք տարբեր տեսաբանների առաջարկած հիմնադրույթները. **հագուստի** նշանային համակարգը ուսումնասիրելու նպատակով՝ Չ.Պիրսի և Ռ. Բարտի նշանի տեսությունները, **հագուստ** բառիմաստային հարացույցի վերլուծության նպատակով՝ Ա. Գրեյմսի կառուցվածքային իմաստաբանության տեսությունը, **հագուստ, հագուստի պարագաներ, հագուստի գույն** բաղադրիչներով հայերեն և անգլերեն ԴՄ-ներում առկայացող **հագուստը ինքնություն է** ճանաչողական փոխաբերության միջոցով հայ և բրիտանական լեզվամշակույթներում **հագուստ** նշանի ընկալումները վեր հանելու և զուգադրելու նպատակով՝ Զ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի ճանաչողական փոխաբերության տեսությունը և Ռ. Յակոբսոնի միջնշանային փոխատեղման տեսությունը:

Սույն ուսումնասիրության **լեզվանյութ** են ծառայել հայերեն և անգլերեն **հագուստ** բառիմաստային խումբը, **հագուստ, հագուստի պարագաներ,**

**հագուստի գույն** բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորները (այսուհետ՝ ԴՄ): Բառարանային համատարած ընտրանքի միջոցով դուրս են բերվել և վերլուծվել **հագուստ** բառի մաստային խումբը ներկայացնող հայերեն 16 բառային միավոր և անգլերեն 32 բառային միավոր, **հագուստ** մատնանշող նորաբանություններ՝ հայերեն 67 և անգլերեն 70, ինչպես նաև ԴՄ-ներ, ասացվածքներ և առածներ՝ հայերենում 300 և անգլերենում 290:

Ատենախոսության **թեմայի** ընտրությունը և **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ճանաչողական նշանագիտության և ճանաչողական փոխաբերության համատեքստում հագուստի՝ որպես նշանային համակարգի վերլուծությունը, ինչպես նաև դրա տեղն ու դերը տվյալ ժողովրդի լեզվամշակույթում վեր հանելը և զուգադրելը մեծապես կարևորվում է լեզվաբանական ուսումնասիրությունների ներկա հարացույցում:

Ատենախոսության **նպատակն** է ոչ միայն ուսումնասիրել **հագուստ** բառի մաստային հարացույցը, **հագուստ**, **հագուստի պարագաներ**, **հագուստի գույն** մատնանշող լեզվական միավորները և այդ բաղադրիչներով կազմված ԴՄ-ները՝ որպես նշանային համակարգի մաս հայ և բրիտանական լեզվամշակույթներում, այլև նպաստել այն կարծիքի հաստատմանը, որ հագուստի՝ որպես բարդ նշանային համակարգի ուսումնասիրությունը կարող է հիմք ծառայել հայ և բրիտանական ազգային լեզվամտածողության բնորոշ գծերի բացահայտման, դրանցում առկա նմանությունների և տարբերությունների վերհանման և հիմնավորման համար:

Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել նշանագիտության, լեզվամշակութաբանության, ճանաչողական նշանագիտության և ճանաչողական փոխաբերության տեսության ընձեռած վերլուծական գործիքակազմը, նշանի, լեզվական նշանի և նշանակերտման առանձնահատկությունները՝ վերլուծելով տարբեր տեսաբանների կողմից առաջարկվող տեսակետները, և սահմանել ատենախոսության հայեցակարգային ապարատը,
- վերհանել և զուգադրել **հագուստ** նշանի ընկալումները հայ և բրիտանական լեզվամշակույթներում՝ վերլուծելով հագուստը՝ որպես նշան, ազգային հագուստը, զարդարանքի պարագաները՝ որպես խորհրդանիշերից բաղկացած յուրահատուկ նշանային համակարգ և դաջվածքը՝ որպես ինքնության նշան և յուրահատուկ մշակութային տեղեկատվություն կրող լեզվական միավորներ հայերենում և անգլերենում,
- վերհանել և զուգադրել **հագուստ** նշանակիչի բառայնացման առանձնահատկությունները և **հագուստ** նշանակյալի իմաստային դաշտը երկու լեզվամշակույթներում՝ համակողմանիորեն վերլուծելով **հագուստ** բառի մաստային հարացույցի և **հագուստ** նշանի լեզվականացման միջոցները հայերենում և անգլերենում,

- ժամանակակից հայերենի և անգլերենի դարձվածային ֆոնդից առանձնացնել *հագուստ, հագուստի պարագա, հագուստի գույն* արտահայտող բաղադրիչով ԴՄ-ները, վերլուծել դրանցում առկայացած **հագուստը ինքնություն է** սեռանիշ փոխաբերության տեսականիշ փոխաբերությունները, դրանց հիմքում ընկած լեզվաճանաչողական կաղապարները և զուգադրել ստացված արդյունքները՝ կարևորելով լեզվական և արտալեզվական գործոնների դերը երկու լեզվամշակույթներում:

Ներկայացված հիմնախնդիրների ոչ բավարար ուսումնասիրությունը լեզվաբանության մեջ պայմանավորում է սույն ատենախոսական աշխատանքի **նորույթը**, այն է՝ առաջին անգամ.

- իրականացվում է հագուստի՝ որպես նշանային համակարգի, զուգադրական վերլուծություն համեմատաբար նոր լեզվաբանական ուղղությունների՝ ճանաչողական նշանագիտության և ճանաչողական փոխաբերության տեսության լույսի ներքո հայ և բրիտանական լեզվամշակույթներում,
- առանձին ուսումնասիրության առարկա է **հագուստ** լեզվական նշանի համեմատական ուսումնասիրությունը հայերենում և անգլերենում, ուստի իրականացված զուգադրական վերլուծությամբ փորձ է արվում վեր հանել **հագուստ** նշանի ընկալման նմանություններն ու տարբերությունները՝ երկու մշակույթների լեզվամտածողության, կենսափիլիսոփայության և աշխարհի լեզվական պատկերի համատեքստում,
- իրականացվում է հագուստի տարրերի՝ ազգային հագուստի, տարագի, զարդարանքի պարագաների և դաջվածքի՝ որպես նշանային համակարգի զուգադրական վերլուծություն՝ կարևորելով դրանց լեզվական առկայացումները,
- իրականացվում է **հագուստ** նշանի լեզվականացման միջոցների, հայերեն և անգլերեն **հագուստ** և **clothes** բառերի հոմանիշային շարքերի, **հագուստ** մատնանշող նորաբանությունների, ինչպես նաև **հագուստ, հագուստի պարագա, հագուստի գույն** մատնանշող բաղադրիչներով ԴՄ-ների զուգադրական վերլուծություն հայերենում և անգլերենում:

Լեզվաբանական վերլուծության մեթոդների ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և հետազոտության նպատակից: Վերլուծության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները**՝ նշանագիտական վերլուծության, ճանաչողական փոխաբերության վերլուծության, բառարանային համատարած ընտրանքի (դուրս գրված օրինակները լուսաբանվել են գեղարվեստական գրականությունից դուրս բերված օրինակներով), բաղադրիչային վերլուծության, զուգադրական և համաժամանակյա զուգահեռ մեկնաբանման (երբեմն անհրաժեշտություն է զգացվել դիմել տարժամանակյա քննության, քանի որ հարկ է եղել վերհանել

**հագուստ** նշանի ընկալման պատմամշակութային շերտերը, պարզել ԴՄ-ների ստուգաբանությունը, ծագման աղբյուրները), քանակական-վիճակագրական մշակման:

Որպես աշխատանքի **մեթոդաբանական հենք** առաջարկում ենք տարբեր տեսաբանների՝ փիլիսոփաների (Օգոստինոս Երանելի, Արիստոտել, Ի. Կանտ, Է. Կասիրեր, Ջ. Լոք, Կ. Մարքս, Ֆ. Էնգելս և այլք), հոգեվերլուծաբանների (Ա. Մասլոու, Կ.Գ. Յունգ և այլք), նշանագետների (Ռ. Բարտ, Չ. Պիրս, Ու. Էկո, Յու. Լոտման, Չ. Մորրիս, Կ. Լևի-Սթրոս, Յու. Ստեպանով, Կ. Պալմեր, Վ. Ռուդնև և այլք), լեզվաբանների (Ֆ. դը Սոսյուր, Վ.Հումբոլդտ, Ա. Պոտերնյա, Կ. Բյուլեր, Ռ. Յակոբսոն և այլք), ճանաչողական գիտությամբ զբաղվող լեզվաբանների (Չ. Ֆիլմոր, Ջ. Լակոֆ, Է. Ռոշ, Ռ. Լանգաքեր, Է. Ջենսեն և այլք) ներկայացրած հենքային դրույթները:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորված է այն փաստով, որ հետազոտության արդյունքները կարող են նպաստել այլ նշանային համակարգերի հետագա ուսումնասիրությունների իրականացմանը, ճանաչողական նշանագիտության, լեզվամշակութաբանության և ճանաչողական լեզվաբանության շրջանակներում զուգադրական նշանագիտական ուսումնասիրությունների մեթոդիկայի զարգացմանը:

Հետազոտության **գործնական արժեքն** այն է, որ մշակվում է գործիքակազմ ճանաչողական նշանագիտական միջգիտակարգային հետագա ուսումնասիրությունների համար, ներկայացվում է համապարփակ նյութ՝ նշանագիտության, լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցության, անգլերենի և հայերենի զուգադրական իմաստաբանության, հասկացութաբանության դասընթացների, գործնական ձեռնարկների և բառարանների ստեղծման համար: Հետազոտության արդյունքները կարող են ունենալ նաև կիրառական նշանակություն՝ օգտագործվելով նորաձևության տներում հագուստի ձևավորման, ճամփորդական ուղեցույցերի ստեղծման և այլ նպատակներով:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները պայմանավորել են աշխատանքի **կառուցվածքը**. այն բաղկացած է *ներածությունից, չորս գլուխներից*, որոնք համապատասխանաբար բաժանվում են *ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից*, ինչպես նաև *երկու հավելվածից*:

**Ներածության** մեջ ներկայացվում է ուսումնասիրության հիմնաթեման, կիրառված մեթոդները, աշխատանքի կառուցվածքը, որոշարկվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական արժեքը, հիմնավորվում է հետազոտության արդիականությունն ու նորույթը:

**Առաջին գլուխը**, որը վերնագրված է «**Նշանի ուսումնասիրության տեսական հիմքերը**», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**Նշանագիտությունը որպես նշանի մասին գիտություն և գիտական հետազոտության մեթոդ**») ներկայացվում է նշանագիտությունը՝ որպես նշանների, նշանային համակարգերի, դրանց տեսակների, կառուցվածքի, գործառույթների, ինչպես նաև նշանային իրադրության մասին ուսմունք: Նշանագիտությունը զարգանում է գիտությունների խաչմերուկում և ունի առանցքային դիրք ժամանակակից գիտության հարացույցում: Այն իր ուսումնասիրությունների նյութը քաղում է լեզվաբանությունից, հոգեբանությունից, մշակութաբանությունից, հասարակագիտությունից, կիրառական գիտությունից և այլ գիտություններից, և փոխառնելը այդ գիտությունների համար ծառայում է որպես հետազոտության մեթոդ՝ առաջարկելով տվյալ գիտության խնդիրների լուծում՝ իր գործիքակազմի և մետալեզվի միջոցով:

Երկրորդ ենթագլխում («**Ճանաչողական նշանագիտությունը որպես միջգիտակարգային հետազոտական ուղղություն**») քննարկվում են ճանաչողական գիտության, նշանագիտության, լեզվաբանության, լեզվամշակութաբանության և այլ գիտակարգերի փոխկապվածության խնդիրները, ճանաչողական նշանագիտության հիմնահարցերը՝ ըստ տարբեր տեսաբանների՝ Ֆ. դը Սոսյուր, Չ. Պիրս, Ռ. Բարտ, Ու. Էկո, Յու. Լոտման, Զ. Լակոֆֆ, Մ. Ջոնսոն, Վ. Հումբոլդտ և այլք: Մանրակրկիտ քննության են առնվում նշանագիտության ճանաչողական մոտեցումները: Ըստ Զ. Զլատևի՝ ճանաչողական նշանագիտությունը գրեթե հավասարապես սերում է նշանագիտությունից, ճանաչողական գիտությունից և լեզվաբանությունից, ընդ որում, այն կարելի է ընկալել ինչպես այդ գիտական ոլորտները ներառող, այնպես էլ դրանց սահմանները գերազանցող գիտական ուղղություն: Հետևաբար, ճանաչողական նշանագիտությունը նվիրված է իմաստի և նշանակերտման միջգիտակարգային ուսումնասիրությանը՝ հիմք ընդունելով **լեզու - նշան - ճանաչողություն - մշակույթ** աղբյուրները, դրանց փոխկապակցված, փոխապայմանավորված և դինամիկ զարգացող բնույթը:

Երրորդ ենթագլխում («**Նշան և նշանակերտում**») ուսումնասիրելով նշանի տարբեր տեսակները, դրանց կառուցվածքը, նշանայնության և նշանակերտման առանձնահատկությունները՝ ըստ տարբեր տեսաբանների (Ֆ. դը Սոսյուր, Վ. Բյուլեր, Չ. Պիրս, Ռ. Բարտ, Ու. Էկո և այլք)՝ վերհանվում է այն դրույթը, որ նշաններում արտացոլված են աշխարհաճանաչողական գործունեության պատկերային-փոխաբերական տարրերը, որոնք տարբեր լեզվամշակույթներում հանդես են գալիս տարբեր նշանակումներով:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**, որը վերնագրված է «**Հագուստ**» **նշանի ընկալումները հայ և բրիտանական լեզվամշակույթներում**», կազմված է երկու ենթագլխից: Ուսումնասիրվում է հագուստի նշանակությունը և հիմնավորվում է այն որպես ինքնության նշան դիտելու գաղափարը:

Առաջին ենթագլխում («**Հագուստի նշանակությունն ու գործառույթները**») ուսումնասիրվում է հագուստի նշանակությունը՝ որպես մարդու հիմնական պահանջմունքներից մեկը և վեր են հանվում հագուստի գործառույթները:

Երկրորդ ենթագլխում («**Հագուստը որպես նշան**»), որը կազմված է երկու բաժնից, ուսումնասիրվում է հագուստը, ինչպես նաև զարդարանքը և դաջվածքը՝ որպես նշանային համակարգեր: Ներկայացվում է հագուստի համալիրի նշանագիտական վերլուծություն՝ ըստ Ռ. Բարտի և Չ. Պիրսի տեսությունների, վերլուծվում են հագուստ-նշանների միջև առկա **շարակարգային** և **հարացուցային** հարաբերությունները, ընդգծվում է հագուստի՝ որպես **նշանային համակարգի** կիրառությունը արվեստում՝ գեղանկարչության, գրականության, ֆիլմերի մեջ, հայ և անգլիական գրականությունից դուրս բերված օրինակներում վերլուծվում է հագուստ-նշանը՝ որպես **կերպարակերտման** և **անձի ինքնությունը** բացահայտելու արդյունավետ գործիք:

Առաջին բաժնում («**Տարազը և ազգային հագուստը՝ որպես խորհրդանիշ**») ուսումնասիրվում են հայ և բրիտանական ազգային հագուստի, տարազի և զարդարանքի պարագաների խորհրդանշային իմաստները, իսկ երկրորդում՝ («**Դաջվածքը որպես ինքնության նշան**») վերլուծվում են հայերեն և անգլերեն լեզվականացված դաջվածքները՝ որպես ինքնության առանձնահատուկ նշան և մշակութային տեղեկատվություն կրող միավորներ:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է «**Հագուստ՝ բառիմաստային հարացույցը հայերենում և անգլերենում**» և կազմված է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**Հագուստ՝ բառիմաստային խումբը հայերենում և անգլերենում**») ուսումնասիրվում և զուգադրվում է **հագուստ բառիմաստային խումբը** հայերենում և անգլերենում՝ վերհանելով և վերլուծելով **հագուստ** և **clothes** բառերի հոմանիշային շարքերը, դրանցում դրսևորված **տարբերակիչ իմակները**, դրանց բառակազմական կաղապարները, լեզվամշակութային շերտը, ինչը թույլ է տալիս վերհանել **հագուստ** նշանակիչի բառայնացման առանձնահատկությունները և **հագուստ** նշանակյալի իմաստային դաշտը երկու լեզվամշակույթներում:

Հայերենում **հագուստ** բառիմաստային խմբի նույնացուցիչ նշանը **հագուստ** բառն է, *մերձավոր եզրային* շերտը կազմում են **զգեստ, տարագ, հանդերձ, հանդերձանք, շոր, լաթ, հագնելիք, հագուստեղեն, հագուստ-կապուստ, հագ ու կապ**, իսկ *հեռավոր եզրային* շերտը՝ **հալավ, ազանելիք, սքեմ, սքոդ, թանկուզի, փորանկած** բառերը: Անգլերենում տվյալ բառիմաստային խմբի կենտրոնական միավորը **clothes** բառն է, *մերձավոր եզրային* շերտը՝ **clothing, wear, wearables, dress, outfit, costume, wardrobe,**



garments, apparel, ensemble, attire, vestment, vesture, իսկ *հեռավոր եղբային* շերտը՝ weeds, gear, habits, get-up, threads, toilet, duds, clobber, garb, togs, toggery, rag, glad rags, raiment, schmutter, rig, rigging, rigout բառերը:

Հայերենի համեմատությամբ անգլերենում **clothes** բառիմաստային խմբում առավել մեծ թվով բառույթների առկայությունը կարելի է բացատրել անգլերենի բառակազմական առավել լայն հնարավորություններով:

Հայերեն **հագուստ** բառիմաստային խմբում արտահայտված է 22, իսկ անգլերենում՝ 23 իմակ: Հայերենում բացակայում են *1.հագնելը, հագուստ կրելը, պստրաստվելը, 2.նորածնություն, 3.ժամանակաշրջանի, երկրի, վայրի և դասային վերաբերություն ունեցող հագուստ և հարդարանքի պարագաներ, 4.կերպարային հանդերձանք, դիմակահանդեսի հագուստ, 5.բեմական հագուստ, 6.հագուստի հատկանիշ՝ համապատասխան, համահունչ, հատուկ առիթի, չսազող, շքեղ, 7.զգեստապահարան, 8.թագավորական կամ ազնվական փան բաժին, որին վստահված է հագուստ, զարդեր և անձնական իրեր պահպանելու գործը, 9.հագուստի կրելիություն, 10.խանութում վաճառվող հագուստ, 11.հեծյալի հանդերձանք, զրահ, հատկապես ձիերի տարբերակիչ իմակները: Անգլերենում բացակայում են 1.ազգային հագուստի ձև, 2.բարտաշոր, 3.զինվորական հագուստ, 4.կահավորանք, 5.էլեկտրական լուսավորության իրերի ամբողջություն, 6.որևէ բան թաքցնելու, քողարկելու՝ այլ փեսքով ներկայացնելու միջոց, 7.փխբ. կամագուրկ՝ անգործունյա մարդ, փալաս տարբերակիչ իմակները:*

Հայերեն **հագուստ** և անգլերեն **clothes** բառիմաստային խմբերի իմաստային դաշտում արտացոլված իմակներից և վերհանված ստուգաբանական տվյալներից դուրս են բերվել և դասակարգվել ինքնության տեսակները՝ հայերենում ինքնության 9, իսկ անգլերենում՝ 10 ցուցիչ:

Երկրորդ ենթագլխում («**Հագուստ մատնանշող նորաբանությունները անգլերենում և հայերենում**») ուսումնասիրվում և զուգադրվում են **հագուստ** մատնանշող նորաբանությունները անգլերենում և հայերենում՝ որպես հագուստի ժամանակակից ընկալումներն արտացոլող լեզվական նոր նշաններ: Հագուստ, հագուստի գույն, արքեստուար մատնանշող, նորածնությանը վերաբերող նորաբանությունները երկու լեզուներում մեծ բառափունջ են, որոնք ոչ միայն հարստացնում են տվյալ լեզուն, այլև արժեքավոր տեղեկատվություն են պարունակում հագուստի և նորածնության ոլորտի և ընդհանուր առմամբ՝ երկու ժողովուրդների աշխարհընկալման և աշխարհի լեզվական պատկերի փոփոխությունների վերաբերյալ:

Գծապատկեր 1. Հազուստ մարտանշող նորաբանությունները հայերենում և անգլերենում



Ինչպես երևում է գծապատկերում, հայերենում և անգլերենում դիտարկված նորաբանությունների մեջ քանակապես գերիշխում են փոխառությունները, և հայերենում դրանք առավելապես փոխառված են անգլերեն բառաբարդման և ածանցման միջոցով ստեղծված նորաբանություններից:

**Չորրորդ գլուխը**, որը վերնագրված է «Հազուստ» նշանի լեզվամշակութային վերլուծությունը հայերեն և անգլերեն ԴՄ-ների հիման վրա», նվիրված է հայերեն և անգլերեն հազուստ, հազուստի և զարդարանքի պարագաներ, գույն մատնանշող բաղադրիչներով ԴՄ-ներում *հազուստ* նշանի վերլուծությանը: Ըստ Ռ. Յակոբսոնի միջնշանային փոխատեղման և Զ. Լակոֆֆի ճանաչողական փոխաբերության տեսության՝ վերլուծվել են հայերեն և անգլերեն ԴՄ-ները՝ որպես *ՀԱԳՈՒՍԸ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է* սեռանիշ փոխաբերության առկայացման միջոցներ, առանձնացվել են մի շարք տեսականիշ փոխաբերություններ և վերլուծվել չորրորդ գլխի համապատասխան ենթագլուխներում. *ՀԱԳՈՒՍԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ԲԱՐԵԿՅՈՒԹՅՈՒՆ Է*, *ՀԱԳՈՒՍԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է*:

Առաջին ենթագլխում («Հազուստը մշակութային/ազգային ինքնություն է») վերլուծվում է *ՀԱԳՈՒՍԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ/ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է* տեսականիշ փոխաբերությունը, որը լեզվում հիմնականում արտահայտվում է իրակությունների միջոցով: Հայերենում դարձվածային իրակություններում հազուստը կարող է արտահայտվել **գոգնոց**, **լաչակ**, **գդակ/գլխարկ/փափախ**, **գոտի** հազուստի պարագաններով, ինչպես նաև դրանց գույներով՝ *կարմիր գոգնոց՝ կին*, *լաչակ ուզել՝ աղջիկ*, *հարս ուզել*, *կանաչ-կարմիր (ժապավեն) կապել*, *ուսկապ կապել՝ փոխան ամուսնացնել*, *կարմիր գոգնոց կապել՝ ամուսնանալ*, *գոփուն դիպչել՝ ուրնձգություն կապարել* դիմացինի իշխանության հանդեպ, *գոփին արձակել՝ պարվազրկել* և *անպաշտպան թողնել* և այլն:

Անգլերենում **ՀԱԳՈՒՍԵ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ/ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերության ցուցիչ են ***crown, collar, stocking, coat, hat*** հագուստի պարագանները, ինչպես նաև դրանց գույներով կազմված դարձվածային իրակությունները՝ ***crown princess/crown prince՝ թագաժառանգ, crowned head՝ թագավոր/թագուհի, wear the King's /Queen's coat՝ բրիտանական բանակում ծառայել, the little gentleman in the velvet coat՝ խլրղ, a white-collar /a white-collar worker, նույն է՝ a blackcoat /a black-coated worker՝ մասնագիտական և գրասենյակային (մտավոր) աշխատանք կատարող մարդ*** և այլն:

Երկրորդ ենթազվխում («**Հագուստը կրոնական ինքնություն է**») վերլուծվում և զուգադրվում են **ՀԱԳՈՒՍԵ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիչ փոխաբերությունն առկայացնող հայերեն և անգլերեն ԴՄ-ները:

Երկու ազգերին էլ բնորոշ չէ կրոնական հատուկ շեշտվածությամբ հագուստ կրելու մշակույթը, սակայն երկու լեզվամշակույթներում էլ **ՀԱԳՈՒՍԵ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերության ցուցիչ կարող են լինել եկեղեցական հագուստի պարագաններով կազմված, ինչպես նաև **խաչ/cross** բառով կազմված ԴՄ-ները՝ ***խոյր կրել՝ եպիսկոպոս լինել, սքեմ հագնել՝ եկեղեցական հոգևոր ծառայության անցնել, wear pectoral cross/a pectorale՝ եպիսկոպոս լինել, հոգևորականների բարձր դասին պատկանել*** և այլն:

Նկատելի է, որ երկու լեզվամշակույթներում էլ հագուստի **սև** գույնն ունի կրոնական զուգորդություն՝ **սև փիլոն, սև փիլոն հագնել/կրել, սև սքեմ, սև սքեմ հագնել/կրել, to wear a black coat/to be a black-coat**: Այս համընկնումը կարելի է բացատրել քրիստոնեական արժեքային տարրերի ընդհանրությամբ, այն է՝ եկեղեցու սպասավորների սև հագուստը պարզ է, զուրկ շքեղությունից:

Երկու լեզվում էլ **ՀԱԳՈՒՍԵ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ների հիմքում ընկած են **հագուստ+գույն, հագուստ+կրել/հագնել, հագուստ+գույն+կրել** լեզվաճանաչողական կաղապարները:

Երրորդ ենթազվխում («**Հագուստը սեռային ինքնություն է**») քննվում են **ՀԱԳՈՒՍԵ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող հայերեն և անգլերեն ԴՄ-ները: Հայերենում այս փոխաբերությունն առկայանում է տղամարդու վերաբերություն ունեցող **գղակ/գլխարկ/փափախ**, կնոջ վերաբերություն ունեցող **գոգնոց, լաչակ** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում:

Ինչպես արդեն նշել ենք, հայ լեզվամշակույթում **գղակը/գլխարկը/փափախը** զուգորդվում է տղամարդու, տղամարդկային հատկանիշների և տղամարդու արժանապատվության հետ, ուստի այդ բաղադրիչով կազմված ԴՄ-ները առավելապես մատնանշում են հենց այդ հատկանիշները՝ **գղակ դնել/ծածկել՝ տղամարդ լինել, տղամարդկային**

հարկություններով օժտված լինել, **գլխին գդակ դնել/լինել/ունենալ**՝ տղամարդ համարվել, տղամարդ լինել, տղամարդու կոչմանը արժանի լինել և այլն: Եթե տղամարդու սեռային վերաբերություն ունեցող ԴՄ-ներում շեշտադրված են տղամարդկային հատկանիշները, տղամարդու արժանապատվությունը, ապա կնոջ սեռային վերաբերություն ունեցող ԴՄ-ներն առավելապես մատնանշում են նրա ամուսնական կյանքով ապրելու հանգամանքը՝ **կարմիր զոգնոց կապել**՝ ամուսնանալ, **գոտին կապել**՝ սեռական կյանքով ապրել, քանի որ ամուսնանալիս հարսի մեջքին ավանդաբար գոտի էին կապում, **գոտին քանդել**՝ երիտասարդ աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալ և այլն:

Եթե հայերենում **ՀԱԳՈՒՍԸ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ** է փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ներում գերիշխում է **տղամարդու կնաբարո դառնալու** իմակը՝ **գնա**, **լաչակ կապի (ր)**՝ արհամարհական արտահայտություն՝ դու տղամարդ չես, կնամարդի ես, կնաբարո ես, **լաչակ կապել**՝ արհամարհական, նախափրական արտահայտություն տղամարդուն ուղղված, կին դառնալ, կնաբարո լինել, **լաչակս դրա (մեկի) գլխին (խսկց.)**՝ արհամարհական, նախատական արտահայտություն տղամարդուն ուղղված՝ **ակնարկելով նրա կնամարդի լինելը**, ապա անգլերենում առավելապես արտահայտված է **կնոջ, մոր ազդեցության փակ** գտնվելու/չգտնվելու առանձնահատկությունը՝ **be tied to one's mother's apron-strings**՝ մոր ազդեցության, տիրապետության տակ լինել, **escape from/cut from/outgrow one's mother's apron-strings, be free of one's mother's apron-strings**՝ մոր ազդեցության, տիրապետության տակ չլինել, դուրս գալ մոր տիրապետությունից, **be tied to one's wife's apron-strings**՝ կնոջ ազդեցության, տիրապետության տակ լինել, **escape from one's wife's apron-strings/be free of one's wife's apron-strings**՝ կնոջ ազդեցության, տիրապետության տակ չլինել, դուրս գալ կնոջ տիրապետությունից:

Անգլերենում **ՀԱԳՈՒՍԸ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ** է փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ներում տղամարդու վերաբերություն են արտահայտում **button** բաղադրիչով՝ **wear bachelor's buttons**՝ չամուսնացած տղա լինել, իսկ կնոջ վերաբերություն՝ **stocking, cap, apron-string** բաղադրիչներով կազմված ԴՄ-ները՝ **a blue stocking**՝ «կապույտ գուլպա», կիրթ կին, որն առավել հետաքրքրված է գիտությամբ, և զուրկ է կանացիությունից, **a pink-collar/a pink-collar worker**՝ ցածր վճարվող աշխատանք կատարող կին:

Զորորդ ենթազխում («Հագուստը հասարակական դիրք է») վերլուծվում են **ՀԱԳՈՒՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐԷ** է փոխաբերությունն առկայացնող հայերեն և անգլերեն ԴՄ-ները: Հայերենում **ՀԱԳՈՒՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐԷ** է փոխաբերության ցուցիչ են **թաշկինակ, չուխա, գրպան, լաչակ, փեշ, շապիկ, վարդիք, փայլաս** և հագուստի այլ պարագաներով կազմված ԴՄ-ները:

Ստորադասության նշան է **չուխա հագնող, չուխավոր լինել** ԴՄ-ը, որն առավելապես վերաբերում է տղամարդուն, ինչպես նաև՝ **ձեռքի թաշկինակ լինել**, ինչը նշանակում է **լիովին սպորտադաս լինել մեկին, կախված լինել մեկից, վարորդ կապել չգիրենալ՝ անփորձ, անհմուտ, խիստ անշնորհ լինել, փալաս դառնալ**՝ անպետքանալ, ոչնչի պետք չգալ և այլն:

Վերադասությունը հայերենում հիմնականում արտահայտվում է փորձառություն, հմտություններ, խելք ունենալու պարագայով, օրինակ՝ **ծալել գրպանը դնել մեկին** ԴՄ-ը խորհրդանշում է **մեկի հանդեպ ինչ-որ հարցում առավելություն ունենալը**, իսկ **մի քանի շապիկ ավելի կտրել/հագնել/մաշել** ԴՄ-ը՝ **շատ մեծ, փորձառու, փորձով լինելը**:

Անգլերենում **ՀԱԳՈՒՍԵ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԴԻՔ Է** փոխաբերությունը կարող է արտահայտվել նաև **collar** բաղադրիչով ԴՄ-ներով՝ **a white-collar /a white-collar worker**, նույն է՝ **a blackcoat /a black-coated worker, a blue-collar / a blue-collar worker, a pink-collar/ a pink-collar worker**, որոնք քննել ենք **ՀԱԳՈՒՍԵ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերության շրջանակում: Այստեղ կարևորում ենք օձիքի գույնը, որը հասարակական առավել բարձր կամ ցածր դիրք գրավելու նշան է, ուստի տվյալ ԴՄ-ներում առկայանում է նաև **ՀԱԳՈՒՍԵ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԴԻՔ Է** փոխաբերությունը: Անգլերենում վերադասության նշան է, օրինակ, **wear purple՝ մանուշակագույն հագուստ կրել** ԴՄ-ը, իսկ ընտանիքի շրջանակներում վերադասության ցուցիչ է **wear the breeches/pants/trousers** ԴՄ-ը, որի իմաստը հայերենում արտահայտվում է ոչ թե հագուստի պարագայով, այլ մարմնի մասով՝ **գլուխ** բաղադրիչով կազմված ԴՄ-ում՝ **փան գլուխ լինել**: Ստորադասությունը կարող է ընտանիքում արտահայտվել **be tied to smb's apron strings** ԴՄ-ով, որը համարժեք է հայերենի՝ **կնոջ փեշից/լաչակից կախված լինել** ԴՄ-ին:

Հետաքրքրական է նաև **fur coat and no knickers** ԴՄ-ը, որը մատնանշում է անզվիացիների կարծիքը բարձր խավին պատկանելիության մասին, որը, սակայն, իրականությանը չի համապատասխանում: Այս ԴՄ-ը և դրա հոմանիշ **all hat and no cattle** ԴՄ-ը նաև **ՀԱԳՈՒՍԵ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերության ցուցիչ են, քանի որ մատնանշում են **բնավորության բացասական գիծ՝ մեծամտություն**:

Հինգերորդ ենթաբաժնում («**Հագուստը մասնագիտություն է**») քննվում են **ՀԱԳՈՒՍԵ ՄՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունն առկայացնող հայերեն և անգլերեն ԴՄ-ները:

Կարելի է փաստել, որ և՛ հայերենում, և՛ անգլերենում հագուստով արտահայտված ԴՄ-ները կարող են արտահայտել տարբեր մասնագիտություններ՝ հայերենում՝ բժիշկ (**խալաթ**), ոստիկան կամ ռազմական ծառայող (**ուսադիր**), գրասենյակային աշխատող (**փողկապ**), դատախազ (**պիջակ**), դատավոր (**պատմուճան**), զինվորական (**բերետ**), իսկ անգլերենում՝ **զինվորական, նավաստի, մարզիկ, ոստիկան, բանվոր, (hat)**,

զիվորական, բժիշկ (**coat**), ակադեմիկոս, դասախոս, ուսանող, ծաղարածու (**cap**), գրասենյակային աշխատող, ֆիզիկական աշխատանք կատարող (**collar**) և փոխանունության ոճական հնարի հիման վրա ստեղծված այլ ԴՄ-ներ:

Երկու լեզվամշակույթներում էլ **զլխարկը** և նրա տեսակները ներկայանում են **ՀԱԳՈՒՍԵ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ներում, ինչպես արդեն վերոնշյալ հայերեն ԴՄ-ներում՝ բերետը և նրա գույները: Անգլերենում՝ **beret** բառով կազմված են մի շարք ԴՄ-ներ՝ **a red beret**՝ թագավորական ռազմական ոստիկանության ծառայակից, **a maroon beret**՝ օդապարիկներով թռնելու մեջ մասնագիտացած անգլիական բանակի զինվորական, **a green beret**՝ հետախուզական զորքերի ծառայակից, **a black beret**՝ բրիտանական զինված ուժերի ծառայակից և այլ ԴՄ-ներ, որոնց հիմքում ընկած է **հագուստ+գույն** կաղապարը: Անգլերենում առկա են նաև **hat** բաղադրիչով կազմված ԴՄ-ներ՝ **a brass hat**՝ զիվորական, ավագ սպա, **a hard hat**՝ պաշտպանող զլխարկ կրող շինարարական աշխատանք կատարող, բանվոր, որոնք առկայացնում են **ՀԱԳՈՒՍԵ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունը:

Վեցերորդ ենթագլխում («**Հագուստը բարեկեցություն է**») ուսումնասիրվում է **ՀԱԳՈՒՍԵ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** սեռանիշ փոխաբերության **ՀԱԳՈՒՍԵ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունը, որը սեռանիշ է դառնում **ՀԱԳՈՒՍԵ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ Է** և **ՀԱԳՈՒՍԵ ԱՂՔՍՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունների համար:

Հայերենում **ՀԱԳՈՒՍԵ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է\*** փոխաբերությունն առկայանում է **գրպան/ջեթ (64%), շապիկ (12%), գոտի (9%), շորահոտ (6%), կարկատան (3%), չուլ (3%), օձիք (3%), փոխան (3%), հալավ (3%)** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում, որտեղ քանակական առումով գերակշռում են **գրպան/ջեթ (61%)** բաղադրիչներով կազմված ԴՄ-ները: **ՀԱԳՈՒՍԵ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ների հիմքում հիմնականում ընկած են **հագուստ+մուկ, մի+հագուստ, վերջին+հագուստ, շորահոտ+կրակ, երկու+հագուստ**, ինչպես նաև **հագուստ+որևէ ածական** լեզվաճանաչողական կաղապարները: Այս ԴՄ-ների շարքում քանակական առումով գերակշռում են **գրպան, ջեթ** բաղադրիչ պարունակող ԴՄ-ները, որոնք բարեկեցության բարձր աստիճանի, **հարստության** նշան են, եթե **գրպան/ջեթ** բաղադրիչը լրացված է **լի, լիքը, հաստ** ածականներով (**լիքը գրպանով, հաստ գրպան**), և **աղքատություն՝ դապարկ, ծակ, քոռ, լղար, խոռով** բացասական հարանշանակություն ունեցող

---


\*Երկու լեզուներում **ՀԱԳՈՒՍԵ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** և **ՀԱԳՈՒՍԵ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերություններն ամենաձավալունն են, ուստի ներկայացնում ենք դրանք առկայացնող ԴՄ-ների քանակական տվյալները:

ածականներով լրացվելու դեպքում (*դափարկ գրպանով, գրպանը ծակ, ջեբը մի քոռ չեթ չպեսնել, ձեռքը գրպանից խոռվ լինել*): Հայերենում **ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայանում է նաև **շապիկ, չուլ/ջուլ, կարկապան, շորահոփ, օձիք, գոփի, հալավ** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում՝ *վերջին շապիկը փայլչինայել՝ ամեն ինչ, բոլորը, ինչ ունի փայլ, չինայել, չուլ/ջուլ ու փալաս՝ հին ու մաշված շորեր, թելը քաշես՝ հազար կարկապան կթափվի(ժող.)՝ հագի շորերը շար հին են, մաշված են, փունը էրես (այրես)/ վառես՝ շորահոփ չի գա (բրբ.)՝ շար չքավոր, մերկ, հագուստից զուրկ և այլն:*

Անգլերենում բարեկեցության ցուցիչ են **pocket** (20%), **shoestring** (12%), **coat** (12%), **cap** (8%), **shirt** (8%), **sleeve** (8%), **belt** (16 %), **stocking** (8 %), **velvet** (8 %), **hat** (4%) բաղադրիչներով կազմված ԴՄ-ները: Ի դեպ, պետք է նկատել, որ դրանք գրեթե հավասարապես են բաշխված, և միայն մի փոքր տոկոսային առավելություն ունի **pocket** բաղադրիչը և նրանով կազմված ԴՄ-ները՝ **deep pocket(s)**՝ հարուստ, գրպանը լիքը, **empty pocket(s)**՝ գրպանը դափարկ, անփող, աղքատ, **tighten/ pull in/draw in/one's belt**՝ ձգել գոփիները, քիչ ուրել, քիչ դրամ ծախսել, խնայել, **Joseph's coat**՝ բազմագույն, հարուստ, թանկարժեք, պաշտոնական հագուստ, **on a shoestring**՝ շար քիչ գումարով, **shoestring budget**՝ փոքր բյուջե, սուղ միջոցներ, **not to have a shirt to one's back**՝ ծայրահեղ աղքատության մեջ լինել/ընկնել և այլն:

Թեև ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ երկու լեզուներում էլ ավելի մեծ քանակ են կազմում աղքատություն, քան հարստություն արտահայտող ԴՄ-ները, հայերենում առավել մեծ թվով (46 ԴՄ) ԴՄ-ներ են առկայանում **ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությամբ: Անգլերենում առանձնացվել է 21 ԴՄ:

Գծապարկեր 2. **ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** սեռանիշ փոխաբերության տեսականիշ փոխաբերությունների տոկոսային հարաբերությունը



Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում **ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունը քանակական առումով ավելի շատ առկայանում է

**գրպան/ջեք** (64%) և **pocket** (20%) բաղադրիչով կազմված դարձվածային միավորներով:

Յրթերորդ ենթազվխում («**Հագուստը բնավորություն է**») ուսումնասիրվում են **ՀԱԳՈՒՍՏԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող հայերեն և անգլերեն ԴՄ-ները:


Հայերենում **ՀԱԳՈՒՍՏԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայանում է **գրպան/ջեք** (25%), **փեշ** (17%), **շապիկ** (8%), **դիմակ** (7%), **շոր/զգեստ** (7%), **քող** (7%), **գդակ/փափախ** (7%), **օձիք** (5%), **տրեխ** (3%), **ակնոց** (3%), **մաշիկ/կոշիկ/սոլի** (3%), **թաշկինակ** (2%), **լաչակ** (2%), **աստառ** (1%) և հագուստի պարագաներով և հագուստի բացակայությամբ՝ **փկլոր** (2%) բաղադրիչով կազմված ԴՄ-ներում՝ **փեշերը լիզել**՝ ստորանալ, ստորաքարշություն անել, քծնել, **փեշը կեղտոտ (խսկց.)**՝ անազնիվ, վարք վարք ու բարքի տեր, **լաչակ չունենալ (բրբ.)**՝ անամոթ լինել, **արև լինի, թաշկինակը տաս փարայով կչորացնես**՝ սարսափելի ժլատ է, չկամ է, անբարյացկամ է, ոչ ոքի լավություն չի անում, **դիմակ դնել/կրել/հագնել**՝ իր իսկական էությունը ծածկել, կեղծել, **հագի շապիկը չխնայել**՝ ամեն ինչ տալ, չխնայել, **սափանին տրեխ հագցնել**՝ ճարպիկ, խորամանկ լինել, **փկլոր մարմնին կատու շալակերը պակաս լինել**՝ իր վիճակին, դրությանը անհամապատասխան բան կատարել և այլն:

Անգլերենում **ՀԱԳՈՒՍՏԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունը հիմնականում առկայանում **boot/shoe** (23%), **hat** (12%), **glove** (10%), **button** (8%), **coat** (8%), **shirt** (8%), **collar** (6%), **pocket** (6%), **cap** (4%), **belt** (4%), **trousers** (4%), **blouse** (2%) և **sleeve** (2%) բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում՝ **high hat**՝ մեծամիտ, **throw one's cap over the mill/windmill**՝ թեթևամտություն անել, անխոհեմ /անշրջահայաց լինել, **wear belt and suspenders**՝ շրջահայաց, զգույշ լինել, **cut one's coat according one's cloth**՝ ուրքերը վերմակի չափով մեկնել, **give the shirt off one's back**՝ վերջին ունեցածն էլ չխնայել, **keep one's shirt on**՝ հանգիստ լինել, պահպանել հանգստություն և այլն:

Վերլուծված ԴՄ-ներում հագուստի տարբեր պարագաներ մարդկային տարբեր որակների ցուցիչ են, այսպես՝ **դիմակը** հիմնականում արտահայտում է **կեղծավորություն, գրպանը**՝ մեծահոգություն, ժլատություն, խաբեբայություն, **քողը**՝ աչքաբացություն, անբարոյականություն, **boot**՝ համառություն, մեծամտություն, **glove**՝ համառություն, համարձակություն, հանդուրժողականություն, **hat**՝ հետամնացություն, դատարկախոսություն, գաղտնապահություն և այլն:



**Գծապատկեր 3. ՀԱԳՌՈՍԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է փոխաբերությունն անկայացնող ԴՄ-ների հարաբերությունը՝ ըստ բնավորության դրական և բացասական գծերի**



Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում էլ, ընդհանուր առմամբ, առավել մեծ քանակ են կազմում բնավորության բացասական, քան դրական գիծ արտահայտող ԴՄ-ները, հայերենում դրանց տոկոսային հարաբերությունն է՝ բացասական՝ 65%, դրական՝ 35%, իսկ անգլերենում՝ բացասական՝ 68%, դրական՝ 32%:

Հարկ է նշել նաև, որ երկու լեզվի դարձվածային շերտում անկայանում է նաև **ՀԱԳՌՈՍԸ ՀՈԳԵԿԻՏԱԿ Է** տեսականիշ փոխաբերությունը՝ հայերենում՝ **փոխանը կապու ընկնել՝** սաստիկ վախենալ, **փոխանը կրակ ընկնել՝** մի բանի հասնելու, մի բան անելու ցանկությունից վառվել, բորբոքվել վառվել, բորբոքվել, **սիրտը սև հագնել՝** տխրել, սգալ, վիշտ ապրել, իսկ անգլերենում՝ **one's heart sink into one's boots՝** վախից սիրտը ոտքերն ընկնել, **shake/shiver in one's boots /shoes՝** վախից դողալ, **wear a black band/a mourning armband՝** տխրել, մեկի մահը սգալ, վիշտ ապրել և այլ ԴՄ-ներում:

Երկու լեզվամշակույթներում էլ անկայանում է **ՀԱԳՌՈՍԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունը հայերենում, օրինակ, **վարդիքային տարիք՝** 1.մանկական տարիք, 2.դեռևս չհասունացած, չկայացած, անհասություն մատնանշող, իսկ անգլերենում՝ **mutton dressed as lamb՝** միջին կամ տարեց կին, որը հագնված է երիտասարդ կնոջ ավելի հարմար ոճով, հատկապես՝ երիտասարդ երևալու համար ԴՄ-ներով:

Հայ լեզվամշակույթում անկայանում է նաև **ՀԱԳՌՈՍԸ ԿԱՇՈՒՔ Է** փոխաբերությունը՝ **գրպանի օգնությանը դիմել՝** դրամով որևէ գործ հաջողացնել, **ջեբերը լցնել** (բրբ.)՝ կաշառել, կաշառք փալ, **ջեբը դնել՝** կաշառել, կաշառք փալ, **գրպանները լցնել՝** կաշառք փալ, կաշառք վերցնել և այլ ԴՄ-ներում:

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության հիմնական արդյունքները.

1. Հագուստը յուրօրինակ նշան է: Հագուստի և զարդարանքի կոնկրետ պարագան, նրա գույնն ու ձևը, ինչպես նաև հագուստի ամբողջական համալիրը նշանակիչն է, իսկ դրանց մեկնաբանությունը նշանակյալն է, որը կարող է արտահայտվել կոնկրետ հասկացույթի միջոցով: Ճանաչողական նշանագիտության լույսի ներքո հագուստի՝ որպես նշանային համակարգի, վերլուծությունը հնարավորություն է տալիս վերհանել **լեզու-նշան-ճանաչողություն-մշակույթ** աղերսները:

2. Հագուստի գործառույթները բխում են մարդու հիմնական պահանջմունքներից: Ընդորում, հագուստի և զարդարանքի կոնկրետ պարագան կարող է կատարել մեկից ավելի գործառույթ, բավարարել մարդու տարատեսակ պահանջմունքներ և ծառայել որպես նշան: Հագուստն ունի վեց հիմնական՝ **պաշտպանության/ապահովության և հարմարավետության, սոցիալականացման, հաղորդակցական, ինքնության արտահայտման, ճանաչողական, գեղագիտական և զարդարանքի գործառույթներ**, որոնք փոխկապված են, իսկ երբեմն նաև փոխապայմանավորում են միմյանց, իսկ առավել ընդգրկուն և բազմաբովանդակ են **հաղորդակցական և ինքնության արտահայտման** գործառույթները:

3. Տարազը կամ ազգային հագուստը խորհրդանիշներից կազմված ինքնատիպ համակարգ է, որը լինելով ազգային մշակույթի նյութական կարևորագույն տարրերից մեկը, ինչպես նաև տվյալ ազգի բնօրրան-աշխարհագրական դիրքի, կլիմայական, տնտեսական, սոցիալական պայմանների, զբաղմունքների, արհեստագործության վերաբերյալ տեղեկատվության կրողը՝ արտացոլում է տվյալ լեզվակրի արժեհամակարգի հասկացական հիմքը և լեզվամտածողության բնորոշ գծերը: Եթե հայկական տարազը առանձնանում է պատմաազգագրական շրջանների տարբեր տարազախմբերով և ազգային հագուստի հստակ կառուցվածքով, ապա աշխարհաքաղաքական հայտնի հանգամանքները թելադրում են, որ որպես բրիտանական ազգային հագուստ կարելի է դիտարկել Միացյալ Թագավորության մաս կազմող երկրների ազգային հագուստները, ինչպես նաև ազգային ծեսերի և, հատկապես, միապետական նշանակության ծիսակատարությունների ժամանակ բրիտանացիների կրած ավանդական հագուստը կամ հագուստի համալիրները:

4. Հագուստի բաղադրատարրերը՝ ձևվածքը, գույնը, նյութը, արտաքին հարդարանքը (զարդեր, սանրվածք, բեղեր, մորուք, դաջվածք և այլն) նույնպես նշաններ են: Դաջվածքները, հատկապես լեզվականացված դաջվածքները՝ որպես արտաքին հարդարանքի տարր, յուրատիպ նշաններ են: Դաջվածքների բնույթի, կառուցվածքի և խորհրդանշական իմաստների վերլուծությունը լեզվամշակութային համատեքստում հնարավորություն են

ընձեռում վերհանել անձի ինքնության վերաբերյալ մշակութային տեղեկատվություն:

5. Հայերեն **հագուստ** բառիմաստային խումբը ներկայանում է առավել փոքրաթիվ բառամթերքով 16 բառ՝ անգլերենի 32 բառի համեմատությամբ (1:2 հարաբերությամբ), սակայն հայերեն **հագուստ** իմաստային դաշտում առկայանում է թվով 22 իմակ (որից 7-ը բացակայում են անգլերենում), իսկ անգլերենում՝ 23 իմակ (որից 11-ը բացակայում են հայերենում): Երկու լեզվամշակույթներում էլ **հագուստ** բառիմաստային խմբում առկայանում են *ինքնության* տարբեր ցուցիչներ. հայերենում՝ **ազգային/մշակութային, սեռային (առավելապես՝ կին), կրոնական, մասնագիտություն, անբարեկեցություն, հոգեվիճակ, հասարակական դիրք, հասարակական կարգավիճակ, բնավորության բացասական գիծ և փարիք** ինքնության ցուցիչները (9), իսկ անգլերենում՝ **ազգային/մշակութային, սեռային (կին, տղամարդ), կրոնական, մասնագիտություն, բարեկեցություն /անբարեկեցություն, բացասական հոգեվիճակ, հասարակական դիրք՝ արքունական պատկանելիություն, ազնվականություն, ինչպես նաև ժամանակաշրջանի, վայրի, նորաձևության** վերաբերություն ունեցող ցուցիչները (10): Հայերեն **հագուստ** բառիմաստային խմբում արտահայտված չէ **ազնվականություն, արքունական պատկանելիություն, ինչպես նաև ժամանակաշրջանի, վայրի, նորաձևության** վերաբերություն ունեցող ինքնության ցուցիչները, իսկ անգլերեն **clothes** բառիմաստային խմբում չեն առկայանում **հասարակական կարգավիճակ, տարիք և բնավորություն** ինքնության ցուցիչները:

6. **Հագուստ, հագուստի պարագաներ, գույն** մատնանշող, ինչպես նաև **հագուստի նորաձևությանը** վերաբերող նորաբանությունները ժամանակակից հայերեն և անգլերեն բառամթերքում զգալի տեղ են զբաղեցնում՝ որպես **հագուստ** բառիմաստային հարացույցում նոր բառերի ձևավորման և տարածման գործընթացների լեզվամշակութային արդի միտումներ: Հայերենում դիտարկված նորաբանությունների մեջ քանակապես գերիշխում են փոխառությունները, որոնք առավելապես փոխառված են անգլերեն բառաբարդման և ածանցման միջոցով ստեղծված նորաբանություններից, իսկ անգլերենում փոխառված են իտալերենից և ֆրանսերենից: Երկու լեզուներում էլ դիտարկված նորաբանությունները հագուստի նոր տեսակների, պարագաների, գույնի լեզվական նշաններ են, որոնք արտացոլում են հագուստի և հագուստի նորաձևության ոլորտի և, ընդհանուր առմամբ, երկու ժողովուրդների աշխարհի լեզվական պատկերի փոփոխությունները:

7. **Հագուստ** մշակութային նշանը նյութական աշխարհից փոխատեղվում է բնական լեզվի նշանային ոլորտ՝ դառնալով լեզվական նշան, և կիրառվում դարձվածային նշանի տարածքում՝ փոխաբերական

կադապարմամբ: Հագուստ, հագուստի պարագա, գույն մատնանշող բաղադրիչներով կազմված հայերեն և անգլերեն ԴՄ-ներում առկայանում է **ՀԱԳՈՒՍՏԸ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** սեռանիշ փոխաբերությունը, որի համար առանձնանում են մի շարք տեսականիշ փոխաբերություններ. **ՀԱԳՈՒՍՏԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ/ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է**, **ՀԱԳՈՒՍՏԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է** և այլն:

ա) **ՀԱԳՈՒՍՏԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ/ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունը լեզվում հիմնականում արտահայտվում է իրակությունների միջոցով, որոնք էլ հենց ազգային ինքնության ցուցիչ են: Հայերենում այդպիսի իրակություններ ներառող ԴՄ-ներում **հագուստ** նշանն արտահայտված է հիմնականում **գոգնոց, լաշակ, գդակ/գլխարկ/փափախ, գոյի**, իսկ անգլերենում՝ **crown, collar, stocking, coat, hat** հագուստի պարագաներով, ինչպես նաև դրանց գույներով:

բ) **ՀԱԳՈՒՍՏԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ Է** տեսականիշ փոխաբերությունն առկայանում է վերադասության և ստորադասության ցուցիչ **հագուստ, հագուստի պարագա, հագուստի գույն** պարունակող հայերեն և անգլերեն ԴՄ-ներում: Երկու լեզվում էլ ստորադասության նշան է անփորձությունը: Հայերենում վերադասության նշան է փորձառություն, հմտություններ, խելք ունենալու պարագան, իսկ անգլերենում՝ բարեկեցիկ կարգավիճակը, արքունական ընտանիքին պատկանելը, ընտանիքում գլխավորը լինելը:

գ) **ՀԱԳՈՒՍՏԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունը հայ և բրիտանական լեզվամշակույթներում զգալի տարբերություններ չի դրսևորում, քանի որ երկու մշակույթներն էլ հիմնականում կրում են կրոնական նույնանման պատկերացումներ և ընկալումներ, սակայն որոշակի տարբերություններ են դրսևորում հագուստի տարրերի ձևավորման, համադրման, ինչպես նաև ծիսակարգային այն առանձնահատկությունների առումով, որոնց հիման վրա տվյալ հագուստի պարագան օժտվել է այս կամ այն խորհրդանշային իմաստով:

դ) Երկու լեզվամշակույթներում առկայացող **ՀԱԳՈՒՍՏԸ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է** տեսականիշ փոխաբերությունը որոշակի նմանություններ է դրսևորում երկու լեզուների ԴՄ-ներում: Եվ՛ հայ, և՛ բրիտանական լեզվամշակույթում կան երկու սեռի վերաբերություն ունեցող ԴՄ-ներ, սակայն հայերենում տղամարդու վերաբերություն ունեցող ԴՄ-ները հիմնականում **տղամարդկային հատկանիշների կամ դրանց բացակայության** ցուցիչ են, իսկ անգլերենում՝ **ամուսնացած լինելու, կնոջ, մոր տիրապետության** տակ լինել/չլինելու ցուցիչ: Կնոջ վերաբերություն ունեցող ԴՄ-ները հայերենում **կնոջ ամուսնացած լինելու**, իսկ անգլերեն ԴՄ-ները՝ **աշխատող, կիրթ կին լինելու** նշան են:

ե) Հայերենում **ՀԱԳՈՒՍԱՏ ԵՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է** փոխաբերությունն առկայացնող դարձվածային միավորներն առավելապես պատկանում են լեզվի խոսակցական շերտին: Երկու լեզվամշակույթներում էլ ՀԱԳՈՒՍԱՏ ԵՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ների շարքում մեծաթիվ են զինվորական վերաբերություն ունեցող ԴՄ-ները:

զ) ՀԱԳՈՒՍԱՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է սեռանիշ փոխաբերության ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է տեսականիշ փոխաբերությունը սեռանիշ է դառնում ՀԱԳՈՒՍԱՏ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ Է և ՀԱԳՈՒՍԱՏ ԱՂՔՍՏՈՒԹՅՈՒՆ Է տեսականիշ փոխաբերությունների համար: Երկու լեզուներում էլ առավել մեծ քանակ են կազմում աղքատություն, քան հարստություն արտահայտող ԴՄ-ները, հայերենում առավել մեծ թվով (46 ԴՄ) ԴՄ-ներ են առկայացնում ՀԱԳՈՒՍԱՏ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է փոխաբերությունը՝ անգլերենի համեմատությամբ (21 ԴՄ): Սակայն հայերեն **հագուստ, հագուստի պարագա** և նույնիսկ դրա պատրաստման նյութ մատնանշող բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում առկայանում է նաև ՀԱԳՈՒՍԱՏ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ Է տեսականիշ փոխաբերությունը:

ե) ՀԱԳՈՒՍԱՏ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է տեսականիշ փոխաբերության ցուցիչ են հայերեն և անգլերեն **հագուստ, հագուստի պարագաներ** մատնանշող բաղադրիչներով կազմված, իսկ հայերենում՝ նաև **հագուստի բացակայություն (մերկություն)** արտահայտող բաղադրիչներով կազմված ԴՄ-ները: Հագուստի տարբեր պարագաներով կազմված ԴՄ-ները հիմնականում արտահայտում են տարբեր հատկանիշներ: Երկու լեզուներում էլ առավել մեծ քանակ են կազմում բնավորության ոչ թե դրական, այլ բացասական հատկանիշ արտահայտող ԴՄ-ները, հայերենում դրանց տոկոսային հարաբերությունն է՝ բացասական՝ 65%, դրական՝ 35%, իսկ անգլերենում՝ բացասական՝ 68%, դրական՝ 32%:

ը) ՀԱԳՈՒՍԱՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է սեռանիշ փոխաբերությունը երկու լեզվամշակույթներում ներկայացված է նաև ՀԱԳՈՒՍԱՏ ՀՈԳԵՎԻՃԱԿ Է, ՀԱԳՈՒՍԱՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է տեսականիշ փոխաբերություններով, սակայն հայ լեզվամշակույթում առկայանում է նաև ՀԱԳՈՒՍԱՏ ԿԱՇՆՈՔ Է տեսականիշ փոխաբերությունը:

Այսպիսով, հագուստը որպես նշանային համակարգ թե՛ հայ, թե՛ բրիտանական լեզվամշակույթներում դրսևորում է ինչպես հասկացական և արժեքային նմանություններ, այնպես էլ տարբերություններ՝ կապված պատմական զարգացումների, մշակութային, սոցիալական, տնտեսական և այլ գործոնների հետ: Հագուստը նշանի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել երկու ազգերի ընդհանրական մտածողության որոշակի կաղապարներ, ուստի և կարևորվում է դրանց զուգադրական քննությունը, քանի որ այն կարող է պատասխան տալ տարաբնույթ հարցերի՝ ժամանակակից բազմազգ հասարակության համար ընկալելի դարձնելով

հագուստը նշանի կադապարումը տարբեր լեզվամշակույթներում: Նույնիսկ ներկայիս՝ գլոբալացման և «համազգեստավորման» աշխարհակարգում **հագուստն** այն նշաններից է, որ կարող է տարաբնույթ տեղեկատվություն հաղորդել այս կամ այն ազգի, ժողովրդի, լեզվակրի ինքնության մասին:

Եզրափակելով՝ նշենք, որ հագուստը՝ որպես յուրատեսակ նշանային համակարգ, լայն ընդգրկում ունի, և մեկ ատենախոսության շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ դրա բոլոր առանձնահատկություններին և լեզվականացման բոլոր ճևերին, հետևապես ստացված արդյունքներն ու մշակված լեզվանյութը կարող են հիմք լինել հետագա ուսումնասիրությունների համար:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. The Notion of Cultural Identity in English and Armenian Phraseological Units Containing Names of Clothes // *Բանբեր*, 1(19), Երևան, ԵՊԼՀ, Լինգվա հրատ., 2012, էջ 12-18 (համահեղինակ Գ. Եղիազարյան):
2. «Հագուստը բարեկեցություն է» փոխաբերությունը հայ և բրիտանական ազգային/մշակութային ինքնության համատեքստում // *Բանբեր*, 1(27), Երևան, ԵՊԼՀ, Լինգվա հրատ., 2013, էջ 229-243:
3. The Metaphor "Clothing is Human Character" in the Context of Armenian and British Cultural Identities // Сборник материалов Международной заочной научной конференции «Культура. Перевод. Толерантность.» Министерство образования и науки РФ, Федеральное гос. автономное образ. учр. высшего профес. образ. «Северо-Кавказский Федеральный Университет», 15 марта, 2013, Ставрополь, էջ 123-129 (համահեղինակ Գ. Եղիազարյան):
4. «Հագուստ» հասկացության առկայացնող ճանաչողական փոխաբերություններն անգլերենում և հայերենում // *Բանբեր*, 1(28), Երևան, ԵՊԼՀ, Լինգվա հրատ., 2013, էջ 188-200:
5. Clothing as a Sign System // *Բանբեր*, 1 (42), Երևան, ԵՊԼՀ, Լինգվա հրատ., 2017, էջ 466-474:
6. «Հագուստը հասարակական դիրք է» ճանաչողական փոխաբերության առկայացումն անգլերեն և հայերեն դարձվածային միավորներում// *Բանբեր*, 1 (48), Երևան, ԵՊԼՀ, Լինգվա հրատ., 2019, էջ 105-113:
7. Neologisms Denoting Clothes in English and Armenian // *Բանբեր*, 1 (58), Երևան, ԲՊՀ, Լինգվա հրատ., 2021, էջ 168-177:
8. Linguocultural Analysis of English and Armenian Lettering Tattoos// *Интернаука: электрон. научн. журн.* 2022. № 39(262). URL: <https://internauka.org/journal/science/internauka/262>  
DOI:10.32743/26870142.2022.39.262.346185

**Ruzan Levon Museyan**  
**CLOTHES AS A SIGN SYSTEM**  
**IN ARMENIAN AND BRITISH LINGUOCULTURES**

Dissertation for obtaining the scientific degree of Candidate of Philological sciences, in the specialty 10.02.02 - "General and Comparative Linguistics".

The defense of the thesis will take place on 8 December 2022 at 11:00 at the SCC (Supreme Certifying Committee) of RA's specialized council 059 of "Slavic Languages" in V. Brusov State University (address: Yerevan 0002, Tumanyan 42)

**Summary**

The present dissertation is devoted to the study of clothing as a sign system in Armenian and British linguocultures.

The **linguistic material** of the research comprises the lexicosemantic groups of Armenian *հագնույր* (16 words) and English **clothes** (32 words), 67 Armenian and 70 English neologisms denoting clothes, as well as 300 Armenian and 290 English phraseological units (PhUs) with the components denoting clothes, clothing accessories, clothing color have been extracted and analyzed.

**The topicality of the research** is determined by the fact that the analysis of clothes as a sign system in the context of cognitive semiotics and cognitive metaphor, as well as highlighting and comparing its place and role in Armenian and British linguocultures, is of great interest in the current paradigm of linguistic studies.

**The aim of the research** is not only to study the lexicosemantic paradigm of the words denoting clothes, clothing accessories, color of clothing and the PhUs with these components as a part of the sign system in Armenian and British linguocultures, but also to contribute to the confirmation of the opinion that the study of clothing as a complex sign system can serve as a basis for bringing out similarities and differences in Armenian and British national worldview.

To achieve this aim, the following **objectives** have been set forth:

- to study the analytical toolkit provided by semiotics, linguistics, cognitive semiotics and cognitive metaphor, the nature of sign, linguistic sign and signification by analyzing the theories offered by different scholars, as well as to define the conceptual apparatus of the dissertation,
- to bring out and compare the perceptions of **clothes** as a sign in Armenian and British linguocultures analyzing clothes as a sign, national clothes and accessories as a unique symbolic system, as well as Armenian and English

lettering tattoos as identity signs and as bearers of culturally marked information,

- to analyze and compare the verbalization peculiarities of the signifier **clothes** and the semantic field of the signified **clothes** in two linguocultures through a comprehensive analysis of the lexicosemantic paradigm of **clothes** and the means of verbalization of the **clothes** sign in Armenian and English,
- to investigate Armenian and English PhUs with the component expressing clothes, clothing accessories, clothing color that actualize the cognitive metaphor *CLOTHING IS IDENTITY* and to provide some insight into the structure of their metaphorical mapping and the role of linguistic and extralinguistic factors in two linguocultures.

The **scientific novelty of the research** is determined by the comparative analysis of **clothes** as a sign system in the light of relatively new linguistic directions: cognitive semiotics and cognitive metaphor to bring out similarities and differences in its perception in Armenian and British linguocultures. For the first time an attempt has been made to investigate clothing elements, national costumes, adornments and tattoos as a symbolic system emphasizing their linguistic representations, as well as to analyze and compare the verbalization peculiarities of the signifier **clothes** and the semantic field of the signified **clothes** in two linguocultures through a comprehensive analysis of the lexicosemantic paradigm of **clothes** and the means of verbalization of the **clothes** sign in Armenian and English linguocultures.

The **theoretical significance of the research** is validated by the fact the conclusions drawn as outcomes of the investigation can contribute to the further studies of other sign systems, the development of the methodology of comparative sign studies within the framework of cognitive semiotics, linguocultural studies and cognitive linguistics.

The **practical value of the research** is conditioned by the fact a toolkit is developed for further interdisciplinary studies of cognitive semiotics, a comprehensive material is presented for compiling dictionaries, courses and practical manuals on semiotics, linguistics, cognitive linguistics, intercultural communication and English and Armenian comparative semantics. The results of the research can also be used in the design of clothes in fashion houses, in the creation of travel guides and for other practical purposes.

The dissertation consists of an introduction, four chapters with relevant sub-chapters, a conclusion, references and two appendixes.



Рузан Левоновна Мусеян  
**ОДЕЖДА КАК ЗНАКОВАЯ СИСТЕМА  
В АРМЯНСКОЙ И БРИТАНСКОЙ ЛИНГВОКУЛЬТУРАХ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 - «Общее и сравнительное языкознание». Защита диссертации состоится 8 декабря 2022 года в 11:00 на заседании специализированного совета 059 ВАК РА («Славянские языки»), действующего в Государственном университете им. В. Брюсова, по адресу г. Ереван 0002, ул. Туманяна 42.

**Резюме**

Настоящая диссертация посвящена изучению одежды как знаковой системы в армянской и британской лингвокультурах.

**Лингвистическим материалом** исследования являются лексико-семантические группы армянского «հագուստ» (16 слов) и английского «clothes» (32 слов), 67 армянских и 70 английских неологизмов, обозначающих **одежду**, а также 300 армянских и 290 английских фразеологических единиц (ФЕ) с компонентами обозначающими **одежду, аксессуары для одежды, цвет одежды**.

**Актуальность** исследования обусловлена тем, что анализ **одежды** как знаковой системы в контексте когнитивной семиотики и когнитивной метафоры, а также выделение и сопоставление ее места и роли в армянской и британской лингвокультурах представляет большой интерес в современной парадигме лингвистических исследований.

**Цель исследования** заключается не только в изучении лексико-семантической парадигмы слов, обозначающих **одежду, аксессуары, цвет одежды** и ФЕ с этими компонентами в качестве знаковой системы в армянской и британской лингвокультурах, но и в подтверждении мнения о том, что изучение **одежды** как сложной знаковой системы может служить основой для выявления сходств и различий в армянском и британском национальных мировоззрениях.

Для достижения этой цели были поставлены следующие **задачи**:

- изучить аналитический инструментарий, предоставляемый семиотикой, лингвистикой, когнитивной семиотикой и теорией когнитивной метафоры, а также природу знака, языкового знака и значения путем анализа теорий, предложенных разными учеными.
- выявить и сопоставить восприятие одежды как знака в армянской и британской лингвокультурах, анализируя одежду как знак, национальную одежду и аксессуары как уникальную символическую систему, а также

армянские и английские надписи-татуировки как знаки идентичности и как носители культурно маркированной информации.

- проанализировать и сопоставить особенности вербализации означающего «**одежда**» и семантического поля означаемого «**одежда**» в двух лингвокультурах посредством комплексного анализа лексико-семантической парадигмы **одежды** и средств вербализации знака «**одежда**» в армянском и английском языках,
- исследовать армянские и английские ФЕ с компонентами, обозначающими **одежду, аксессуары, цвет одежды**, которые актуализируют когнитивную метафору **ОДЕЖДА - ЭТО ИДЕНТИЧНОСТЬ**, и дать некоторое представление о структуре их метафорического отображения и роли языковых и экстралингвистических факторов в двух лингвокультурах.

**Научная новизна** исследования определяется сравнительным анализом одежды как знаковой системы в свете таких относительно новых лингвистических направлений как когнитивная семиотика и теорией когнитивной метафоры, чтобы выявить сходства и различия в ее восприятии в армянской и британской лингвокультурах. Впервые предпринята попытка исследовать элементы одежды, национальные костюмы, украшения и татуировки как символическую систему, подчеркивая их языковую репрезентацию, а также проанализировать и сопоставить особенности вербализации означающего «**одежда**» и семантического поля означаемого «**одежда**» в двух лингвокультурах путем комплексного анализа лексико-семантической парадигмы **одежды** и средств вербализации знака **одежды** в армянской и английской лингвокультурах.

**Теоретическая значимость** исследования подтверждается тем, что выводы, сделанные по результатам исследования, могут способствовать дальнейшему изучению других знаковых систем, развитию методологии сопоставительного анализа знаков в рамках когнитивной семиотики, лингвокультурологии и когнитивной лингвистики.

**Практическая ценность** исследования обусловлена тем, что разработан инструментарий для дальнейших междисциплинарных исследований когнитивной семиотики, представлен обширный материал для составления словарей, курсов и практических пособий по семиотике, когнитивной лингвистике, межкультурной коммуникации и сравнительной семантики армянского и английского языков. Результаты исследования также могут быть использованы при проектировании одежды в домах мод, при создании путеводителей и в других практических целях.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, библиографии и двух приложений.